Իսկ այժմ գիտութիւնը առաջ ընթանալով, կազմել է լուսնի մանրամասն քարտէզը, որից երեւում է. որ լուսնի վրայ երեւացող կէտերը նրա բարձրութիւններն են, լեռները, իսկ մութ մասերը՝ լեռներից ընկած ստուերներ կամ հրէշաւոր հրաբխային լեռների բերաններ, գիտենք որ լուսնի դէմքի վրայ քիթը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի ահագին լեռնային շղթայ, որ լուսնի Ապենիններ է կոչւում և վերջանում է օղակաձև թումբով, որ Կոպերնիկի խառնարան է կոչւում. այդ խառնարանի խորքն այնքան ընդարձակ է, որ նրա մէջ կարող է գերմանական մի ամբողջ իշխանութիւն զետեղել։ Աջ աչքի տեղ տարածուած է մի ընդարձակ գորշ հրապարակ, որ 16,000 քառակուսի մղոն տեղ է բռնում և կոչւում է Անձրևի Ծով։ Ձախ աչքի տեղը երեւում է մի ուրիշ գորշ կանաչ 5000 քառակուսի մղոն մեծութեամբ և կոչւում է Պարզութեան Ծով։ Նրան կպած է մի ուրիշ գորշ հովիտ Հանգստեան Ծով անունով, որ կարող է լուսնի դէմքի վրայ յօնքի տեղը բռնել և հասնում է մինչև ականջը։ Այդ հովտի ծայրին, որ լուսնի սկաւառակի եզերքումն է, կայ բարձունք, որ կոչւում է Առատութեան Ծով։ Դրանից փոքր ինչ վերև երեւում է ձուաձև մի բիծ Ճգնաժամի Ծովը։ Ճակատի վրայ դիւրութեամբ կարելի է տեսնել մի քանի կնճիռներ ու կէտեր, որոնք Ցրտի Ծով անունն ունին։ Մնում է բերանը. դա շատ որոշ չէ երեւում. բայց լաւ նայելիս այդ էլ է երեւում. բերանը կազմուած է Ամպերի Ծովի հարաւային մասից և Խոնաւութեան Ծովից, որն արեւելեան կողմից է միացած և 2,400 քառ. մղոն տեղ է բռնում։ Աջ այտի տեղն է Փոթորիկների Ովկիանոսը որ մի ահագին մութ հովիտ է լուսաւոր գծերով ու շերտերով ծածկուած. նրա մեծութիւնը 90,000 քառ. մղոն է։ Ձախ այտը ու կզակը ծածկուած են բազմաթիւ լուսաւոր բծերով. դրանք

լեռնոտ կտորներ են լի խառնարաններով (այսինքն հրաբխային լեռների բերաններ)։

Ինչպէս նկատում էք, անունների մեծ մասը մեզ յիշեցնում են ջրի գոյութիւնը լուսնի վրայ, մի բան, որ բոլորովին բացակայում է այն իմաստով, ինչ իմաստով որ հասկանում ենք երկրի վերաբերմամբ։

Լուսինն էլ ունի՞ մթնոլորտ թէ ոչ։ Այս խնդիրը երկար վիճաբանութիւնների առիթ է եղած գիտնականների մէջ։ Ցամենայն դէպս անկասկած է, որ լուսնի վրայ մի այնպիսի մթնոլորտ, որ փոքր ’ի շատէ նման լինէր մեր մթնոլորտին, չկայ։ Բայց դրանից չպէտք է հետևացնել, թէ լուսնի վրայ ամենևին մթնոլորտ չկայ։ Հէյտոնի ուսումնասիրութիւնից երևում է, որ յամենայն դէպս լուսնի մթնոլորտը երկրի մթնոլորտից գոնէ 300 անգամ նօսր է։ Պիկերինգն Արեկվիպայի լեռնային դիտարանից 1892 թուին դիտում էր, թէ ինչպէս Իւպիտեր մոլորակը ծածկւում էր լուսնի սկաւառակի ետևը։ Նշանակը պարզ էր և խաղաղ։ Երբ որ հասնում է ծածկուելու րոպէին, Իւպիտերի սկաւառակը երևում է տափակած, երկու ծայրերից հուպ տուածի նման։ Այդ ապացոյց էր, որ Իւպիտերի արձակած ճառագայթները հանդիպելով լուսնի մթնոլորտին, բեկուել էին։ Պիկերինգի կարծիքով՝ լուսնի մթնոլորտը մեր մթնոլորտից 8 հազար անգամ նօսր էր.

Այդպիսի դիտողութիւններ եղած են նաև Տուլուզում՝ լուսնի վերջին խաւարման միջոցին։ Իսկ լուսնի խաւարման միջոցին աւելի հեշտ է այդպիսի դիտողութիւններ անել հետևեալ պատճառով։

Առ հասարակ նկատուած է, որ լոյսը մթնոլորտի մէջ բեկւում է այսպէս, երբ առաւօտեան արևը ծագում է, մենք արևը տեսնում ենք դեռ նա չծագած. այսինքն արեգակը դեռ ևս հորիզոնից ցած է լինում, որ մենք նրան տեսնում ենք. այդ նրանից է, որ արևի ճառագայթներն ընկնելով մթնոլորտի մէջ, բեկւում են և պատկերացնում մեր առաջ արևի պատկերը։ Միևնոյն բանը պատահում է նաև մայր մտնելիս.—արևն արդէն մտած է լինում հորիզոնի տակ, բայց նրա ճառագայթները մթնոլորտի մէջ բեկուելով մեզ ցոյց են տալիս արևի երեսը. հետևաբար մենք օրուայ ընթացքում արև աւելի ենք տեսնում, քան թէ մեր հորիզոնը թոյլ էր տալու՝ եթէ մթնոլորտ չլինէր։

Միևնոյն ձևով էլ կարելի է դիտողութիւններ անել նաև լուսնի



վերաբերմամբ. եթէ նրա վրայ մթնոլորտ լինէր, պէտք էր որ ամեն մի աստղ, որ մտնում է լուսնի ետևը, այսինքն ծածկւում է լուսնի սկաւառակի ետևում, հէնց ծածկուելուց յետոյ էլ երևար մեզ։ Բայց որովհետև սովորաբար լուսնի լոյսն անհամեմատ աւելի զօրեղ է ամենալուսաւոր աստղերի լոյսից, ուստի և այդպիսի դիտողութիւն շատ դժուար է լինում անել։ Եւ ահա երբ լուսինը խաւարում է, այսինքն երբ երկիրս արեգակի և լուսնի միջև հանդիպելով խափանում է լուսնի լոյսը, այդ միջոցին հեշտ է տեսնել աստղի լոյսը նոյն իսկ այդ ժամանակ, երբ նա ծածկւում է լուսնի ետևը՝ եթէ միայն լուսինը մթնոլորտ ունի։

Տուլուզում եղած դիտողութիւնների միջոցին նկատել են, որ նկատուած աստղը լուսնի սկաւառակի ետևը ծածկուելուց յետոյ դարձեալ 10 վայրկեան երևացել է։ Ուրեմն լուսինն էլ ունի մթնոլորտ։ Բայց այդ մթնոլորտն ընդունակ չէ ամպեր կազմելու։ Թէպէտ լուսնի վրայ նկատւում են ամպի պէս բաներ, բայց Մեդլերի, Գրուիտոյզէնի և ուրիշների ուսումնասիրութիւնից երևում է, որ այդ առ աչօք երևոյթ է միայն.

Բայց և այնպէս լուսնի մակերևոյթի վրայ երբեմն երբեմն երևում են մշուշի նման բաներ, որոնք բաւական երկար ծածկած են ունենում լուսնի տեսարանները։ Շատ գիտնականների ուսումնասիրութեամբ հաստատուած է այդ երևոյթն անկասկածելի կերպով։ Այն միջոցին, որ հարթավայրերը պատած են լինում մշուշով, լեռները, խառնարանները, և օղականման բարձրութիւններն ազատ են մշուշից և փայլում արևի տակ։

Եթէ ուղիղ որ լուսինն ունի մթնոլորտ, եթէ նոյն իսկ նրա մակերևոյթի վրայ մշուշ է կանգնում, կարելի չէ՞ ենթադրել, որ մի որև իցէ կեանքի նշան ևս լինի այդտեղ։

Ի հարկէ, մեզ նման էակների գոյութիւնը բացարձակ անհընար է լուսնի վրայ. բայց օրգանական ստորին կարգի կազմուածքների գոյութիւնը հերքելն էլ դժուար է։

Լուսնի վրայ ցերեկը տևում է 14 օր, նոյնքան է նաև գիշերը. Պարզ է որ ցերեկներն այնտեղ շատ տաք է լինելու, քանի որ լուսնի մթնոլորտը չափազանց նօսր լինելով, շատ էլ տաքութիւն չպիտի կարողանայ կլանել ինչպէս մեր մթնոլորտը։ Սակայն մանրազննին քննութիւններից երևում է, որ լուսնի վրայ ամենաշատը կարող է 50° ջերմութիւն լինել ըստ Ցելզիուսի, մինչդեռ

դրա հակառակ գիշերներն այնպիսի ցուրտ պէտք է լինի, որ մեր երկրի մէջ կարող չէ պատահել, քանի որ լուսնի ջերմութիւնը կախուած է արևի լոյսից, իսկ երկիրս բացի այդ ունի նաև իր սեպհական ջերմութիւնը։ Ուստի անհնարին չէ ենթադրել, թէ կարճատև ջերմացման միջոցին լուսնի վրայ զարգանալիս լինին, ստորին կարգի մարմնակազմեր, որոնց սաղմերը սովոր լինին դիմանալ լուսնական գիշերուայ ցրտերին։ Իսկ ինչ վերաբերում է բարձր մարմնակազմերին, այդ մասին խօսք անգամ կարող չէ լինել—լուսնական կեանքի պայմաններում նրանք կարող չեն ապրել։

Կան ենթադրողներ, թէ լուսնի միւս երեսին, որը մեզ չէ երևում, քանի որ միայն լուսնի մի կողմն է մեզ դարձած լինում միշտ, կարող են կեանքի ուրիշ պայմաններ գոյութիւն ունենալ։ Սակայն դրա համար և ոչ մի հիմք չկայ։ Ճշմարիտ է, լուսնի միւս կէսը մեզ երբէք չէ երևում. բայց լուսնի առաջին և վերջին քառորդի միջոցին հնարաւոր է լինում թափանցել նաև նրա միւս երեսի փոքրիկ մասերը, որոնք նոյն կազմութիւնն ունին, ինչ որ լուսնի այն երեսը։

Մարդիկ շատ հին ժամանակներից երկնային մարմիններին, մանաւանդ լուսնին վերագրում էին երկրիս վրայ ներգործելու ընդունակութիւն։ Այդ հաւատալիքներն այսօր էլ գոյութիւն ունին տգէտ ժողովրդի մէջ։

Արդեօք լուսինը ներգործութիւն ունի երկրիս վրայ։

Յայտնի է, որ իւրաքանչիւր մարմին ունի ձգողական ոյժ. և հարկէ այդ ոյժն ունի նաև լուսինը. եթէ երկիրս դէպի իւրն է ձգում լուսինը, վերջինս էլ իր չափով դէպի իւրն է քաշում երկիրս։ Եւ այդ լուսնի ձգողական ոյժը երևում է առաւելապէս ջրերի ովկիանոսների ու ծովերի վրայ, որոնք ենթարկւում են կանոնաւոր մակընթացութեան և տեղատուութեան։ Երբ լուսինը կանգնած է լինում երկրի այն մասի վրայ, ուր ովկիանոսներն են, դրանք ուռչում են, վեր բարձրանում, և ջուրը ողողում է ափի հարթավայրերն ահագին տարածութեամբ. բնականաբար միևնոյն միջոցին ջուրը պակասում է ովկիանոսի մասերում, ուր լուսինն անմիջապէս չէ ներգործում. այդ տեղերում լինում է տեղատուութիւն, այսինքն ջուրն ափից հեռանում է։

Ահա լուսնի ներգործութիւնը երկրիս վրայ։ Գիտութիւնն ուրիշ ներգործութիւն չի ընդունում բացի այն հանգամանքից, որ



լուսնի խաղաղ, հանգուցիչ լոյսը կարող է տպաւորութիւն գործել նեարդային, դիւրազգաց անհատների վրայ։ Սակայն այդ ներգործութիւնը կամ տպաւորութիւնը զուտ սուբեկտիւ է, անձնական է, ուղիղ այնպէս, ինչպէս մէկի վրայ լաւ ներգործութիւն է ունենում փոթորիկը, մինչդեռ մի ուրիշին հոգեկան և նեարդային խանգարմունք պատճառում։

Միևնոյն կերպով լուսնի ներգործութիւնը երկրիս եղանակների վրայ ոչ մի կերպ չի արտայայտւում, թէպէտ ընդհանուր տարածուած կարծիք է, թէ լուսնի վրայ եղած այս կամ այն դիտողութեամբ կարելի է գուշակել, թէ ինչպիսի եղանակ է լինելու երկրի վրայ։ Շատ կարելի է այդ դիտողութիւններն ուղիղ են, բայց դրանք ոչ թէ արդիւնք են լուսնի ներգործութեան, այլ մեր մթնոլորտի պայմանների, որոնց միջից մեզ երևում է լուսինը։

Իւրաքանչիւր անգամ որ լուսինը ծնւում է, եղանակով հետաքրքրւողները աշխատում են որոշել լուսնի եղջիւրների դրութիւնը—ներքև՞ են դրանք թէ վերև, այսինքն չորային է լինելու առաջիկայ շաբաթը, թէ անձրև է գալու։ Կարելի է, որ այդ դիտողութիւնը ևս ուղիղ լինի. դա նշանակում է, որ առաջին դէպքում մեր մթնոլորտի մէջ գոլորշի քիչ կայ և լուսնի եղջիւրներից արձակուող լոյսը սակաւ է բեկւում մթնոլորտի մէջ մինչդեռ երկրորդ դէպքում կընշանակէ օդի մէջ շատ գոլորշի կայ և լուսնի լոյսն աւելի բեկւելով, եղջիւրները վերև են երևում։

Անցեալները «La sci nce pour tous» հանդէսում հրատարակուած էին լուսնի վերաբերմամբ մի քանի դիտողութիւններ, որոնցով կարելի է գուշակել, թէ ինչպիսի եղանակ է լինելու։ Եթէ լուսնի ծնունդից 3—4 օր յետոյ լուսինը բոլորովին պարզ է ու մաքուր, նշանակում է, որ բաւական ժամանակ լաւ եղանակ է լինելու։ Եթէ ծնունդի երկրորդ կամ երրորդ օրը եղջիւրի ծայրերը բութ երևան, ուրեմն շուտով անձրև է գալու։ Եթէ լուսնի ամբողջ սկաւառակը կարմիր է, շատ վատ եղանակ է լինելու։ Եթէ ծընունդի ժամանակ ջինջ է, ազատ սև բծերից և սև շրջանակից, պէտք է պարզ եղանակ լինի։ Եթէ ընդհակառակը լուսնի սկաւառակի վրայ նկատուին մութ կէտեր և չորս կողմն էլ երկու կամ երեք սև շրջանակ,—ասել է խիստ անձրև է գալու և առհասարակ վատ եղանակի նշան է։ Եթէ լուսինն ամառը ծագելիս կարմիր գոյն ունենայ. պէտք է տաք լինի. իսկ եթէ ծագելիս սկաւառակը մաքուր լինի, լաւ եղանակ է սպասւում։ Լուսնի ծննդեան միջոցին երկնքի մաքուր, ջինջ լինելը նոյնպէս լաւ եղանակի նշան է։

Եթէ այս բոլոր նկատողութիւններն ուղիղ են, ապա պէտք է վերագրել մեր մթնոլորտի դրութեան և ոչ լուսնի ներգործութեան։ Լուսինը մեզ կերևար միշտ միևնոյն յեղափոխութիւններով, եթէ միայն մեր մթնոլորտը միշտ խաղաղ և մաքուր լինէր։

# III. ՕԴԵՐԵՒՈՅԹԱԲԱՆԱԿԱՆ

1902 թ. Եփիմէրտէի գուշակութիւնը

Առաջիկայ 1902 թ. Գարունը և Ամառը խոնաւ. Աշունը չոր ու ցամաք, Ձմեռը հողմալից և պաղարիւ. Տարուն Հրատն իշխելով, երկրաշարժերից Ազատուած ազատի. Երևակի եօթնեերորդ տանը գտնուելն ևս նշանակում է կատարած և պատերազմ. Երևակի Լուսաբերի հետ ընթանալովը և Լուսնի Վիշապի (Համաստեղութեան) գլխին կցուած լինելովն հարուստներին, Նշանաւոր մարդկանց, ինչպէս և մի մեծահամբաւ տիկնոջը՝ մահ է գուշակում.

Իսկ Տանուտէրի Ցուլն լինելով, տարին պտղաբեր չէ լինելու. այդ պատճառով շատ ցանքս չը պէտք է անել. Բաբելոնի կողմերը սով և մահ կը լինի. Արևելք անասնոց-տարափ ցաւ. Գարնան վերջը հողմով, ամառն տօթային սաստիկ ջերմով. Ձմռանամուտը մեղմ. իսկ յետոյ շատ ձիւն. բայց գարունն ամեն կողմից բարութիւն.



† 16 սեպտ. 1901 թ. Թիֆլիսի քաղաքագլուխ Գէորգ Գ. Եւանգուլեանց.

# IV. ԻՄԱՍՏՆԵՐ

—Բաջասրտութիւնը Թոյլերի ոյժն է.

—Ամբողջ աշխարհս եռանդին է պատկանում.

—Խղճի առաջ ոյժը զօրեղ չէ.

—Ոյժն ու քաջութիւնը երբէք սուտ չեն ասում.

—Օրէնքը ճնշում է կրքերը, բայց պաշտպանում է պատիւը, կեանքն ու կայքը.

—

Անպատկառ, լիրբ ու անարգ մարդիկ ձանձրացուցիչ ճանճերի են նմանում, որոնք որչափ անարգւում են, այնչափ աւելի են լրբանում.

—Անամօթի համար ոչինչ օրէնք չըկայ. նրա օրէնքն իր հաշիւն է.

—Ամեն մի պսակի տակ միլիոնաւոր փշեր կան.

—Դրամատիքական արուեստը—անընդհատ կեղծիք է.

—Ոսկին աւելի հոգի է կորցնում, քան սուրը. որ միայն մարմինն է սպանում.

—Ներկայումս չի կարելի գտնել—աղքատ կառավարիչ, անկաշառ դատաւոր, անկեղծ ճգնաւոր և վստահելի ծառայ.

—Ոչ մի շահ չկայ—անխրատ որդուց, անհնազանդ կնոջից, յամառ ծառայից, ծոյլ ու ծեր կենդանուց և անօգուտ բարեկամից.

—Մի ազգ հէնց որ իւր իրաւունքները ձեռք բերեց՝ խաղաղում է, և սկսում է թուլանալ՝ հենց որ խաղաղում է.

—Կեղծ փողն ու կեղծ սէրը շատ յաճախ են ձեռք ընկնում, բայց անփորձ մարդիկ միշտ իսկականի տեղ են ընդունում.

—Երբ չարագործի հաշիւները չեն արդարանում, այլ արդարութեան ձեռքով սկսում են ոչնչանալ, այն ժամանակ նա աւելի սաստիկ է կռւում արդարութեան դէմ, անդադար իւր ոյժից, իւր կարողութիւնից խօսելով.

—Տաճարից արտաքսուած աւազակները տաճարի շահերի անունով են երդւում, որպէս զի ժողովրդին մոլորեցնեն, էլի տաճար մտնեն ու կողոպտեն.

—Բարի ցանկութիւնը նման է ճաքած տակառի, իսկ բարի գործը—անարատ տակառի.

—Մինչ որ մարդս լեզուն պահի—բերանը կը ցամաքի.

—Վատ կարծիքից մի վախենաք, ազատ ապրեցէք.

—Փափուկ ձեռքով տրուկ գնեցէք և ոչ պինդ բռունցք ունեցող.

—Կապ ու կռւից հեռու փախիր.

—Ազգականից ճաշ մի ուզէք.

—Խղճացէք կէս հարբածներին, որոնց ձեռից գինին թափուել է.

—Բաղդը քչերին է ժպտում, բայց շատերի վրայ ծիծաղում է.

—Աւելի կասկածոտ է լինում այն ամուսինը, որ իւր կնոջը չէ սիրում.

—Մարդիկ իրենց ազնիւ ցոյց տալու համար ուրիշներին ազնիւ են համարում.

—Ով որ դանդաղում է, թէ ժամանակ չունի գործի համար, նա իսկապէս գործ չունի.

## ԻՄԱՍՏՆԵՐ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

Կանանց մասին.—Ոչ թէ սառն ուղեղով, այլ սառն սրտով կարելի է կանանց կառավարել։

—Կինը մի այնպիսի արարած է, որին կարելի է ամենայն ապահովութեամբ համեմատել թէ հրեշտակի և թէ դևի հետ։

—Միշտ բաղդաւոր լինելն է հէնց ամենամեծ անբաղդութիւնը։

—Մի հաւատալ ձիու քրտնելուն, հրէայի երդմանը և կնոջ արտասուքին։

—Կնոջ ատելութիւնը դևից զօրեղ է, մինչ դևը մենակ է գործում՝ կինը դևին էլ է օգնական վերցնում։

—Ինչ որ սատանան սիրտ չի անի անելու, այդ կը յանձնէ պառաւ կնոջը կատարելու։

—Կինն աւելի կծան է դառնում հէնց ատամները թափուած միջոցին։

—Դատարանի մէջ կինը միշտ ուղիղը կասէ, բայց ոչ բոլորը։

—Սուտը կնոջ ֆիզիօլօգիական յատկութիւնն է դարձել։

Առաջին բանը, որ կանայք գիտեն, այդ այն է, որ իրենք գեղեցիկ են. առաջին բանը, որ նրանք ուսումնասիրում են, այդ իրենց ոյժն է. առաջին բանը, որ նրանք ժխտում են, այդ իրենց թուլութիւնն է և առաջին բանը, որ մոռանում են, այդ իրենց տարիքն է։

Երկրպագութիւնը առանց սիրոյ շատ բան չարժէ. սէրը առանց երկրպագութեան ոչինչ։

—Կինը սուտ ասելիս շատ բնական ձև է պահում. նա սուտն ասում է այնպէս, ինչպէս երկնքից ձիւն է տեղում։

—Կինը նոյն իսկ ինքն իր առաջ անկեղծ չէ։

—Բնութիւնը կնոջ ինքնապաշտպանութեան համար մի զէնք է տուել միայն—կեղծիքը (ձևացնելը)։

—Լաց լինող կինը նոյնքան վշտակցութեան արժանի է, որքան և բոբիկ ման եկող սագը։

—Առանց սիրոյ փող կարելի է պահել, բայց առանց փողի սէրը չի պահպանուիլ։

Շատ անգամ դժուար է ջոկել, թէ որտեղ է վերջանում կնոջ իսկական վշտի արտասուքը և որտեղ սկսւում կեղծը։

—Սէրը—Աստուծոյ պատիժն է։

—Ով չի նախանձում (խանդանում)—նա չի սիրում։

—Սէրը կամաւոր ստրկութիւն է, որին փափագում է կնոջ սիրտը։

—Կնոջ բնաւորութիւնը պահանջում է լիովին ենթարկուել տղամարդու իշխանութեան։

—Եթէ կինը ձեզ ատում է, նշանակում է նա սիրել է ձեզ, կամ սիրում է կամ պիտի սիրէ։

—Կնոջ ատելութիւնը անողոք է և քինաբոյր։

—Սէրն անակնկալ է վրայ պրծնում

—Գեղեցկութիւնից կարելի է կուրանալ։

—Սէրը կոյր է. բայց ինչու խուլ ու համր էլ չէ։

—Մի քանի կանանց համար տղամարդը լոկ կայարան է, ուր կարճ ժամանակով կանգ են առնում։

# V. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

### Ծիծաղից մարդու բնաւորութիւնը ճիշտ որոշելու համար

Այն մարդիկ որոնք ծիծաղելիս Ա-բառով են արտահնչում, պարզամիտ, փոփոխամիտ, եռանդոտ են և սիրում են հանաքներ անել. Է-բառով ծիծաղողը տխրասէր է և մելամաղձոտ խառնուածքի տէր։ Օ-ով ծիծաղում են աւելի պատուասէր և քաջ մարդիկ։ Երեխաները և չափաւոր մարդիկ, Ի-բառով աւելի են ծիծաղում, որոնք աւելի զգայուն են և անհանգիստ։ Ու-ով ծիծաղողներից խոյս տալու է, որոնք մեծ մասամբ ինքնասէր են և ժլատներ։

—

### ԵՐԱԶՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ֆրանսիացի գիտնական Դելոնէն իւր վրայ գործ դրած փորձերից համոզուեց, որ երազը ուղղակի նրանից կախում ունի, թէ քնած ժամանակ, ուղեղը որ մասն է աւելի տաքանում։ Օրինակ երբ իւր ճակատը ծածկում էր բամբակով, այդ ժամանակ քնում էր հանգիստ և կանոնաւոր։ Երբ գլխի ետևի մասն էր տաքացնում, զարմանալի և անհանգիստ երազներ էր տեսնում. ձախակողմը տաքացնելուց՝ ֆանտաստիկական երազներ, որոնց մէջ երևում էին վաղուց մոռացուած տեսարաններ և պատկերներ. իսկ աջակողմը տաքացնելուց երազները աւելի հանգիստ, խելացի և այնպիսի տեսարաններ էին ներկայացնում, որոնք մօտիկ անցեալին էին վերաբերում։

# VI. ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԵՐ

Քաղաքավարի մարդը երբէք մարդու ներկայութեամբ չը պէտք է թքէ, եթէ անհրաժեշտ լինի թքելը կարելի է գլուխը մէկ կողմը դարձնելով, թաշկինակը բերնին գցել ու որչափ կարելի է անձայն թքել թաշկինակում։

—

Յօրանջել մարդու ներկայութեամբ անվայել է, որովհետև ներկայ եղողներին ևս յօրանջել կը պատճառէ։ Այդ պատճառով որքան կարելի է պէտք է զգուշանալ և ի հարկէ գլուխը մէկ կողմ դարձնելով բերանը գոցել և այնպէս յօրանջել։

—

Սխտոր ու սոխ ուտելը թէև շատերու համար համեղ է, բայց չուտողի համար հոտն անտանելի է, այդ պատճառով սոխ ու սխտոր ուտողը այն օրը ուրիշի տուն այցելութեան չ'պէտք է գնայ. և իրան մօտ հիւր ընդունելու օրը ներելի չէ որ սոխ ու սխտոր ուտէ։

—

Մարդու ներկայութեամբ որև է պտուղ խածնելով չպէտք է ուտել. մանաւանդ տանձ ու խնձորը առանց կեղևը չառկած ուտելը անվայել է։ Իսկ պնակէդ մէջ սեղանի վրայ երբէք բերանիցդ ծամուած կտոր չը հանես։ եթէ որ և է պատճառով անհրաժեշտ լինի հանելը. հացի կտորով կարելի է ծածկել։

—

Սեղան նստած ժամանակդ, անձեռոցիքով երբէք կուրծքդ մի ծածկիր, միայն ծնկանդ վրայ թողնելու ես և աւելի վայելուչ է որ կիսածալ բանաս։

—

Սեղանին վրայ թևերն թևակոխել—կանել, մեծ ամօթ է. ներելի է միայն ձեռքն սեղանին կցելն։

—

Եթէ սեղանիտ վրայ մօտդ նստողը, տիկին է պարտաւոր ես, նորան ծառայութիւն մատուցանել, բաժակը ջուր լեցնել, կամ հասցնել թէ գինի կամ որ և է ուրիշ ուտելիք կ'ուզէ։ Անօթխածութեամբ ծառայութիւն չի կարելի, իսկ անուշադիր մնալն ես ներելի չէ։

—

Եթէ սեղանակից է (քեզ) մի որ և է կին, ընաւ չ'պէտք է ծխել, եթէ նոյն իսկ հրաման էլ տան։

—

Մինչև որ տանտիկինը, կամ տանուտէրը ոտի չը կանգնեն, որ չափ էլ յագեցած լինես, պարտաւոր ես նստել սպասել։

—

Ինչոր լինի, օտարի ներկայութեամբ, մատներով չ'պէտքէ կերակուր ուտել. առհասարակ ձուկն (ուտելիս) ևս դանակով չ'պէտք է կտրել, այլ մէկ ձեռքդ հացի կտոր բռնելով պատառաքաղով կտրել։

—

Ճաշի ժամանակ որչափ էլ սոխլեն, չափից աւելի գինի մի խմիր, բարձրաձայն մի խօսիր. եթէ ճաշը լաւ է գովիր. եթէ լաւը չէ դիտողութիւն չ'ա-



նես։ Եթէ մի որև է վատ եփած պատրաստած կերակուրի մասին կարծիքդ հարցնեն, որչափ կարելի է քէչ՝ բամբասէ, առանց ստելու։

—

Երբ հիւր հրաւիրես, չ'պէտք է մոռանաս որ հիւրերուդ առողջութեանը պատասխանատու լինելով, բաւական չէ, միայն կերակուրներու շքեղ տեսակներ երևալը, այլ պէտք է նաև դիւրամարս էլ լինեն։

—

Սեղանի վրայ որքան էլ ճաշը լաւ լինի, եթէ գինին լաւը չէ, ճաշդ կորած է, և թէ որ թունդ գինի չես կամենայ կամ չես կարող վերցնել, պէտք է աշխատես որ թէև արժան, բայց բնական գինի լինի որովհետև բնական գինին որքան որ մարդուս առողջութեանը օգտակար է, շինծու գինին ընդհակառակը այնքան վնասակար, այդ պատճառով, աւելի լաւ է պարզ ջուր խմել քան կեղծ գինի։

—

Երբէք հիւրերդ չը ստիպես չափից աւելի գինի խմել, որովհետև նրանց առողջութեանը վնասակար է։

Երբ հիւրերդ գինու չափը անցկացնեն, դու ինչպէս տանուտէր զգուշանալու ես շատ խմելուց որ կարգը չը խանգարուի։ Այդ ժամանակ վատ չի լինիր որ յայտնուի թէ գինին հատաւ. բայց չը վիրաւորուելու համար պէտք է որ սուտը չերևայ։

—

Երբէք չ'ստիպես հիւրերուդ չափից աւելի խմել, թող նրանք պարծենան թէ մի ամբողջ տկճոր էլ կարող են դատարկել, դու հաւատալ ձևացրու։

—

Գինի խմած ժամանակ հիւրերու մէջ խօսք կամ վէճ ծագած ժամանակ, դու ոչմի կողմը մի բռնիր, այնպէս ձևացրու որ երկու կողմին ևս իրաւունք ես տալիս, նրանց կարծիքները արտայայտելու. մանաւանդ երբ տանդ մէջն է, պէտք է անտարբեր չ'կարծեն քեզ. քու կարծիքդ այդ վէճի մասին, աշխատիր ուրիշ օրուան պահել։

# VII ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

Յոգնած մարդկանց խորհուրդ է տրւում, եթէ երկար ժամանակ քուն չեն կերել ու շատ վաստակած են, ճաշի չը նստել, մինչև ոյժերի փոքր ինչ վերականգնիլը, այլապէս կարող է պատահել որ ստամոքսն անկարող գտնուի մարսելու ընդունած կերակուրը։ Սակայն ոյժերը շուտ վերականգնելու համար, պէտք է երկու ձու կոտրել և սպիտակուցն ու դեղնուցը ջոկ-ջոկ լաւ հարել, յետոյ խառնել իրար. մէջը մի քիչ շաքար և մէկ պակիմատ գցել և ուտել։ Այս խառնուրդը, ինչպէս փորձը ցոյց է (տալիս) տուել, ստամոքսը հեշտութեամբ է մարսում, որքան և մարդ յոգնած լինի։ Այս խառնուրդը ուտելուց յետոյ մարդ շատ շուտով է կազդուրւում։

—

Խորհուրդ թէյ խմելու օգտակարութիւնը։ Թէյի մէջ կիտրոն կամ թթու քաղցրաւենի խառնելով, թէյի միջի տանինի վնասակար յատկութիւնը բոլորովին կորչում է։



† 15-ին սեպտ. 1901 Թ. Ամերիկայի Միացեալ Նահանգների Նախագահ Մակ-Կինլէի

# VIII. ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

Ինչպէս իմանալ կովի իւղի անարատ լինելը։

—

Կովի իւղի նենգելը ներկայումս շափազանցութեան է հասել։ Ուստի կարևոր է իմանալ հետևեալ միջոցը, որով կարելի է ճիշտ որոշել իւղի զուտ կամ խառնած լինելը։ Մի փոքր կտոր իւղ դնել երկու ապակեղէն թերթերի մէջ. ազմել և յետոյ նայել խոշորացոյցով։ Եթէ խոշորացոյցի տակ երևային գեղեցիկ, գնդաձև աստղիկներ, կնշանակէ, որ իւղին մարգարին կամ որ և այլ նիւթ է խառնած։

—

Վարունգները թարմ պահելու համար մինչև 3—4 շաբաթ պէտք է նրանց ամբողջ ծայրերը դնել 2—3 վերշոկ ջրի մէջ և շուտ շուտ ջուրը փոխել։

—

Սառած հողը փափկացնելու միջոց։ Զմեռուայ սառած ցրտից գետինը հեշտ է փորւում, եթէ վրան ջուր չը թափած անարատ կիր ցանուի։

Կաղամբի որդի դէմնոր միջոց.—Պէտք է ութ մաս ջրից, 3 գրվ. 63 մս. կալցուբերից (սերնօ-կիսլի մեդի). 3 գրվ. 63 մս. հանգած (ջուրածած) կրից և 4, 5 մաս պատոկ իրար խառնել և որդերը երևալուն պէս այս խառնուրդը ցանել կաղամբի փոշերին։

Տանը ծաղիկ պահողները յաճախ կուում են ծաղկամանի մէջ առաջ եկող սողուններին դէմ, որոնք վնասակար են լինում։ Ամենալաւ միջոցը, «Sardin» թերթի ասելով, հետևեալն է. պէտք է առնել վայրի շագանակ և մանրացնելով ածել ջրի մէջ ամեն մի բաժակ ջրին 10 շագանակ բաւական է։ Այդ ջուրը պէտք է ածել ծաղկամանի մէջ։ Դա ծաղիկներին օգուտ է, իսկ սողուններին և որդերին վնասակար։

## IX. ՏԱՆՏԻԿԻՆ

Սովորութիւն է մեր մէջ նարինջի կեղևները դէն ձգել իբրև անպէտք բան, մինչդեռ այդ կեղևներից կարելի է լաւ քաղցրաւենիք պատրաստել, որ թանգ չի նստիլ տնտես տանտիկնոջը։

1) Նարինջի կեղևը չորս մաս կտրտելով պէտք է թաթախել թանձր շաքարաջրի (սիրոպ) մէջ և ապա չորացնել տաք վառարանի ծածկած քուրայում։ Այս չորացած կեղևները շատ լաւ են լինում խմորեղէնների մէջ, պէտք է դրանց բարակ կտրտել, կամ քերել և ածել խմորեղէնի մէջ ու այնպէս եփել—թխել։

2) Նարինջի կեղևից սուր դանակով պէտք է կլպել դեղին կաշին, այնպէս, որ հնար եղածին չափ քիչ մնայ սպիտակ կեղևից, յետոյ այդ դեղին կաշին պէտք է մանր կտրտել, ածել շիշի մէջ, աւելացնել քիչ շաքար և լցնել վրան լաւ օղի, որպէս զի լաւ նստի ու պէտք է մի շաբաթ շիշը պահել տաք տեղ։ Դրանից յետոյ պէտք է եփել թանձր շաքարաջուր մէկ-ութերորդական գրւանքայ շաքարից, ածել դրա վրայ շշի միջի ըմպելիքը և սառելուց յետոյ քամել ձագարի միջոցով, կանխապէս ձագարի մէջ դնելով թուղթ կամ միկրոսկոպիական բամբակ։ Եթէ շշի մէջ աւելացնենք մի կամ երկու հատիկ հիլ և մի քիչ դարչին, կստանանք մի շատ լաւ ըմպելիք կիւրասոյի համով, որից շատ համեղ փունջ կարելի է շինել թանկագին հիւրերի համար։

—

**Կարմիր գինու բիծը**, եթէ շատ չէ հնացել, հեշտ է հանւում—անցնում հասարակ օղիով։

—

Արծաթեղէնները, սապնաջրով և նըշադրի սպիրտով լաւ է մաքրում։

Թրթնջուկ (щавель—շչավել) խոտ-տերեններովն էլ մաքրւում է, միայն այս տերեններով աւելի լաւ մաքրւում է, ձուից սևացած արծաթէ դգալները։

—

Զատկուայ համար պասկայ պատրաստելու կերպը.—10 հատ ձուի դեղնոցը այնքան հարել 2 բաժակ շաքարաւազի հետ, որ սպիտակի, աւելացնել 1/4 գրվանքայ առաջուց մաղից անցկացրած—մաքրած կարագ և այս բոլորը այնպէս ալիւրով հունցել, որ մէջը կոշտեր չլինի։ Յետոյ երկու պնակ խիժը (творогъ—տվարոգ) էլ առաջուց մաղով մաքրած խառնել և կրկին խառնել մի առ ժամանակ, որանից յետոյ էլի մի բաժակ շաքար, կէս բաժակ հարած ձուի սպիտակուց, կէս բաժակ ըմեժան (սմետան) և մի բաժակ սերտ սեր։ Այս բոլորը միատեղ խառնելուց յետոյ ածել առաջուց պատրաստած թիթէ կաղապարում (ֆորմայ) փաթաթել համանձեռոցիքով և այսպէս 10—12 ժամ դնել թեթև կրակին։

## X. ԳԻՒՏ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

**Աշխարհիս ամենամեծ շողակը**։ Լոնդոնում ծախու էր հանուած աշխարհիս ամենամեծ շողակը, որ Եգեր Ֆաունտէն է կոչւում. գնահատուած է մէկ միլիօն ֆունտ ստերլինգ, որ աւել է 6,300,000 րուբլի։ Մինչև այժմ յայտնի էին իւենց մեծութեամբ «Ռեգենտ», «Իմպերիալ» և «Օրլով» շողակները։ Նոր շողակը կշռում է 273 կարատ, սառցէ լիլի ձև ունի, գոյնը շատ գեղեցիկ կապոյտ է. երկարութիւնը 3 գիւմ է, իսկ ամենահաստ սեղում տրամագիծը 2 գիւյմ։ Գտնուած է Օրանժի հասարակութեան մէջ և գտնող նեգրը 1000 ֆունտ ստերլինգ վարձատրութիւն է ստացել։

—

**Հսկայական ծխնելոյզ**.— Նիւ-Եօրկում շինուած է մի ելեքտրական գործարան որի ընդհանուր ուժը հաւասար է 70,000 ձիու ուժի։ Ամեն բան մեծ է և հսկայական այդ գործարանում. միմիայն կեդրոնական ծխնելոյզի բարձրութիւնը 107,65 մետր է, շրջապատը 11,85 մետր ներքևում և 8,20 մետր վերևում, դրա վրայ գործ է ածուել 3,400,000 աղիւս և կշռում է 8,540 տոնն։ Գործարանում կայ 87 շոգեկաթսայ, ածխի բաժինը կարող է 9,000 տոնն ածուխ վերցնել, որը տեղափոխելու համար միայն հարկաւոր կլինի 18 երկաթուղային գնացք կազմել, ամեն մի գնացքը 50 վագոնից բաղկացած։ Գործարանի շէնքի երկարութիւնն է 85 մետր, իսկ լայնութիւնը 60 մետր։

—

**Հսկայական ջերմաչափ**.—Գնդապետ Նայթ երկրիս զանազան խորութիւններում ջերմութեան աստիճանը չափելու համար շինել է տուել մի մեծ ջերմաչափ, որի բարձրութիւնը 70 ֆուտ է և ապակեայ խողովակի շրջապատը հինգ սանտիմետր կշռում է 250 պուդ։ Այդ հսկայական ջերմաչափը գործածելու համար ճախարակների օգնութեան են դիմում։

## XI ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

### Մարդկանց միմեանց ուտելը

Երբեմն այնպիսի քստմնելի տեսարաններ են տեղի ունենում մարդկանց կեանքի մէջ, որոնք բաջ մի անգամ ընդ միշտ հաստատում են, թէ մարդ աստուած արարածը գազաններից ամենազզուելին է, էգոիստներից ամենածայրահեղը։ «Մարդիկ միմեանց ուտում են» ասացուածքը դատարկ խօսք չէ և ոչ էլ ճարտասանական ոճ, այլ իսկական, ռէալական ճշմարտութիւն է, փաստ է և վերաբերում է ոչ թէ վայրենի մարդակերներին, այլ քաղաքակրթուած եւրոպացիներին իսկ։ Եթէ քաղաքակրթուած մարդիկ միմեանց չեն ուտում, այդ նրանից է, որ ժամանակ են ունենում միմեանց ունեցածը և աւելի թոյլի հացը խլելու և ուտելու, բայց հէնց որ դրւում են այն վիճակի մէջ, որ այլ ևս ուտելու ոչինչ չը կայ, այն ժամանակ իսկապէս ուտում են միմեանց, ինչպէս Լոնդոնի լրագիրները պատմում են հետևեալ սոսկալի դէպքը, որից մարդու մազերը փշաքաղւում են։ Ֆիլիպպեան կղզիների Կաւիտ նաւահանգստից մեկնած «Անջէլա» շոգենաւի վրայ կային 37 հոգի, բացի նաւաստիներից։ Նաւը ճանապարհորդութեան վեցերորդ օրը ենթարկուեց փոթորկի, որի ժամանակ 20 հոգի խեղդուեցին, իսկ ազատուած 17 հոգին տեղաւորուեցին երկու նաւակների մէջ. փոքրի մէջ 5 հոգի, իսկ մեծի մէջ 12 հոգի, որոնց թւումն էր նաև նաւապետ Կոոկեր։ Առաջ երկու նաւակները միասին էին թափառում ծովի վրայ. բայց փոքրիկ նաւակը երեկոյեան դէմ կորչ գնաց ալիքներին ու միայն մեծը իւր տասներկու հեծեալներով։ Քսան և հինգ օր մեծ նաւակը միայն բաց ծովում ափառելիս և այդ 25 օրուան ընթացքում 12 մարդիկ մի կտոր ուտելու բան չունէին և մի կաթիլ ջուր չունէին խմելու։ Նրանք երբեմն երբեմն պատահաբար ծովի երեսից որսում էին խխունջներ, բոյսեր ու կեղտ և ուտում։ 25-երորդ օրը նաւարկուներից երկուսը խելագարուեցին և իրենք իրենց ձգեցին ծովը։ Քսան և վեցերորդ օրը նրանցից մէկը,



ազգով ֆրանսիացի, յանկարծ կացինը ձեռքին յարձակուեց իւր ընկերներից մէկի վրայ, կացինն իջեցրեց նրա գլխին ու սկսեց ագահութեամբ խմել մեռնողի գըլխից շատրուանի պէս խփող արիւնը, ապա կամեցաւ ուտել նրա ուղեղը, բայց ընկերներն արգելեցին.... որպէս զի երեկոյեան ամենքը միասին ուտեն մեռածի դիակը, և կերան։ 27-րդ օրն այդ նոյն մարդը կացինը վերցրեց որ սպանէ նաւապետ Կոոկէրին, բայց կացինը նրա ձեռքից խլեցին և իրեն սպանեցին ու մարմինը կերան և այդպէս շարունակ միմեանց ուտելը շարունակուեց, մինչև որ 12 հոգուց մնացին երկու հոգի մի չիլեացի Ժոհանսէն անունով և մի սպանացի Մարթիքոռնու անունով, որոնք անսպասելի կերպով ազատուելով վերջապէս ցամաք ելան և պատմեցին այս սոսկալի պատմութիւնը։

**Բուլղարական սովորութիւններ.**— Բուլղարական թերթերից մէկը նկարագրում է բուլղարական մի քանի սովորութիւններ, որոնք կատարուել են միայն վայրենի ժողովուրդների մէջ։ Սանից երևում է, որ միմիայն առողջ ծնուած և ֆիզիքական պակասութիւններ չունեցող երեխան է ընտանիքի անդամ համարւում Բուլղարիայում։ Իսկ եթէ երեխան ֆիզիքական որև է պակասութիւն է ունենում, որ ժողովուրդը վերագրում է չար ոգուն, երեխան էլ չար ոգի է ճանաչւում և իրաւունք չի ունենում ապրելու, նըրան սպանում են նոյն իսկ ծընուած բոպէին։ Այսպէս սպանել և լեռներն է ձգուել մի երեխայ, որ ծնուել է մեծ գլխով և փոքրիկ ոտներով. պապի ձեռքով նոյնպէս սպանուել և գետն է ձգուել մի ուրիշ երեխայ, որի մի աչքը ճակատի վրայ է եղել, միւսը՝ ծոծրակի վրայ։ Այս երկու դէպքերի մասին էլ գիտէր ամբողջ գիւղը, բայց ոչ ոք չի էլ մտածել յանդիմանելու սպանողներին։ Ոչ պակաս վայրենի չէ և մեռելներին վերաբերեալ սովորութիւնները։ Բուլղարացիները միջոցներ են ձեռք առնում մեռելի կենդանի (վամպիր) դառնալու դէմ, և այդ միջոցները կայանում են նրանում, որ մեռելի ոտների տակի փափուկ միսը կտրում են, իսկ կրծքի մէջ մի մեծ մեխ են ցըցում։ Այսպէս 1894 թուին մեռաւ Սոտչո անունով մի ծերունի մարդ. վախենալով թէ մի գուցէ նա կենդանի դառնայ և գիշերները գերեզմանից դուրս գալով շրջէ, նրա պառաւ կինը իւր բարեկամ կանանց հետ կտրում է նրա ոտների տակի միսը և կըրծքին մի ահագին մեխ է ցցում։ Այս բոլորը կատարւում է եկեղեցական հոգեհանգստի հետ միասին։ Իշխանութիւնն այս բոլորի վրայ ոչ մի ուշադրութիւն չի դարձնում։

**Տարօրինակ ջութակ.**— Անգլիային Հարաւային Աֆրիկայի Դուրբան քաղաքից ուղարկուած է եղել մի ջութակ, որ ամբողջովին կազմուած է եղել... մարդկային ոսկորներից։ Ջութակի ներքևի մասը շինուած է մարդու գանկից, երեսը քաշուած է ոչխարի կաշի, կոթը շինուած է ոտի ոսկորից, իսկ ականջները ձեռքի մատների ոսկորներից։

# XII. ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

**Բազմածնունդ կինը.**—Անցեալները լրագիրներում հաղորդուած էր, որ 22 ամեայ Վիկտորիա Ռոշեմայլը 11 երեխայ ունի։ Ի հարկէ այդ քիչ չէ 22 տարեկան կնոջ համար։ Բայց նա կարող չէ տա մրցել Վարվառա Տարացմանի հետ, որն ապրում էր XV դարում և որի մասին հաղորդուած տեղեկութիւններով հաստատուած են պաշտօնական ստորագրութիւններով ու կրնիքներով։ Նա պսակուած էր Ադամ Տարացմանի հետ և ապրում էր Վիրտեմբերգի Բէննիգհայմ քաղաքում։ Այդ կինն ունեցել է ոչ աւել և ոչ պակաս —53 զաւակ, 38-ը տղայ և 15-ը աղջիկ։ Վարվառէն 18 անգամ ծնել է մի-մի երեխայ, 5 անգամ երկ երկու, 4 անգամ երեք-երեք և մի մի անգամ էլ 6 և 7 հատ։ Վեց երկուորեակներից (այսինքն վեցորեակներից) երեքը ծնուել են 5 ամսական, 10 օր յետոյ ծնուել է չորրորդը. 70 օրից՝ հինգերորդը և զարձեալ 70 օրից՝ վեցերորդը։ Միենոյն եղանակով ծնուել են նաև եօթնորեակները. Վերջին երեխան մի այնպիսի մեծ գլուխ է ունեցել, որ երկու առողջ տղամարդիկ հազիւ են կարողացել դուրս քաշել։ Բոլոր ծնուածներն էլ մկրտուած են։ բայց երկար չեն ապրել և ոչ մէկը 9 տարեկանի չէ հասել։ Մայրը վախճանուել է 50 տարեկան այն էլ բոլոր զաւակներից յետոյ.

—

**Պառաւ նորահարսը.**—Աշխարհիս ամենապառաւ հարսնացուն—այժմս արդէն նորահարս է դարձել։ Նա 98 տարեկան է, իսկ նորափեսան—75 տարեկան։ «Թէպէտ իսկապէս ինձ ամենևին վայել չէր, որ ծերունի մարդու հետ պսակուէի,—ասում է ժպտալով մեր նորահարսը միստրիս Դրեկորը.—կին առածդ միշտ այնքան է հասակաւոր լինում, ինչքան որ ինքը կուզէ։ Իմ Սամուէլս ասում է թէ,—զուցէ դա սիրահարութեան ցնորքն է,—ես ութսունամեայի կերպարանք ունիմ. մինչդեռ նա իւր հիւանդութեան շնորհիւ ճշմարիտ որ ութսունամեայ է թւում, այնպէս որ տարիքների տարբերութիւնը բոլորովին ոչնչանում է»։ Նորապսակներն իրենց հարսանիքը կատարեցին գիւղական տանը, որին կից կայ պարտէզ, փոքր ինչ հող և մի փառաւոր չէկ կով։ Ահա 40 տարի է, որ միստրիս Դրեկորն ապրում է այս տան մէջ։ Նա ծնուել է 1802 թ. և իւր ծնողների մահից յետոյ ամուսնացել է Պրատտոն անունով մէկի հետ, որի մեռնելուց յետոյ ամուսնացաւ երկրորդ անգամ։ Սա երրորդ և հաւանականօրէն վերջին ամուսնութիւնն է։

## ՌՈՒՍԱՑ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՏԻՏՂՈՍԱԿԻՐ ՏՈՀՄԵՐ ԵՒ ԱՆՁԵՐ

Ինչպէս երևում է „Списки титулованнымъ родамъ и лицамъ Россійской Имперіи“ —«Ռուսաց Կայսրութեան տիտղոսակիր տոհմերի ու անձանց ցուցակ»-ից ամբողջ կայսրութեան մէջ բոլոր տիտղոսակիր ընտանիքների ու

| | |
|---|---|
| անձանց թիւն է . . . . | 948 |
| Այդ թուից «իշխան» տիտղոսակիրների թիւն է . . . | 390 |
| Գրաֆներինը . . . . . | 300 |
| Բարոններինը . . . . . | 254 |
| Մարկիզներինը . . . . . | 3 |
| Հերցոգներինը . . . . . | 1 |
| Իշխաններից վրացիների թիւըն է . . . . . . . . | 118 |
| Ջանազան ազգութեանց (լիտվացի, լեհ, թուրք, ֆինն) . | 218 |
| Ռուսներինը. . . . . . | 46 |
| Հայերինը . . . . . . | 7 |
| Գրաֆներից ռուսների թիւն է | 100 |
| Ջանազան ազգութեանց . . | 200 |

Հայ իշխանական ընտանիքները հետևեալներն են՝

1) Աբամելիք-Լազարեաններ։

2) Ամատունիք, որոնց համար ասուած է թէ՝ վրաց Հերակլ թագաւորի հրովարտակով 1784 թուից են ստացել իշխանական տիտղոսը։ Առաջին տիտղոսակիրը եղել է Սերգէյ Պետրովիչ Ազարեան, Ամատունին իւր որդի Ստեփանի, Կարապետի, Գրիգորի և եղբօր որդի Յակոբ Իվանովիչ Ամատունու հետ։

3) Արղութեան-Երկայնաբազուկ իշխանները։

4) Բէգթաբէգեաններ։

5) Բեհբութեաններ։

6) Թումանեաններ։

7) Խօջամիրեանսեաններ։

## XIII. ՋՈՒԱՐՃԱԼԻՔ

Մի յանցաւորի դատաւորը հարցնում է. „подъ судомъ былъ“. պատասխանում է յանցաւորը—Я сейчасъ тамъ табакъ курилъ.

—

Մի մարդու, որը երբէք սովորութիւն չունէր բարի խօսք ասելու, իր ընկերներից մինը հարցնում է. «Եղբայր Գրիգոր, վերջին ժամանակ, հայրենիքից վերադառնալիս երբ մեր տան մօտով անցար, այն մեր սրահի դամբոլը էլի շղթայած էր։

—Ձեր սև ձիու (սատկած) միսը ուտելուց յետոյ սատկել էր։

—Ա՛յ մարդ միթէ մեր ձին սատկել է։

—Հօրդ տապանաքարը տանելիս մէջքը երկուտկվել էր։

—Ա՛յ մարդ միթէ հայրս էլ մեռաւ, ես տեղեկութիւն չունիմ։

—Որդկերանց մահից յետոյ հազիւ եօթն ամիս ապրեց։

—Ա՛յ մարդ ուրեմն միայն մայրիկս է այժմ կենդանի։

—Մայրիկդ հօրիցդ վաղ մեռաւ՝ որովհետև որդկերանց կսկիծը չը կարողացաւ տանել։

—Վա՜, բաս սաս մեր տունը քանդուեց էլի։

—Չէ քանդուիլը ես չ'տեսայ, միայն վերադառնալիս երբ Ձեր տան կողմը նայեցի, Ձեր տունը էլ չէր երևում, Ձեր տան տեղը բոստան էին ցանել։

—

Անցեալները Ռուստովի հաշտարար դատաւորը մի գործ էր քննում։ Մի թեթևաբարոյ կին, Ք-ի քնած միջոցին մկրատով խուզել էր նրա երկար բեխերը։ Ք-ն 50 ր. վնաս էր պահանջում։ Դատաւորն առաջարկում է հաշտուել։

—Պարոն Ք.,—ասում է մեղադրեալի պաշտպանը,—մեղադրեալը 15 ր. է առաջարկում եկէք հաշտուեցէք։

—Ոչ մի պայմանով. հա, որ 50 ր. տայ, էլի, էլի պակաս չեմ առնի...

—Հաշտուեցէք, պ. Ք., 15 ր. լաւ փող է. միթէ մի փունջ մազ աւելի արժէ...

—Լաւ, որ այդպէս է, ես ձեզ 20 ր. կըտամ, թողէք ես էլ ձեր բեխը խուզեմ,—պատասխանում է Ք-ն և խեղճ փաստաբանին չըշկլեցնում։

—

—Marie, տուէք ինձ խնդրեմ ձեր սրտի բանալին։

—Ձեր քսակի մէջ որոնեցէք։

—

—Օրիորդ, ձեր այս սանրուածքը ինձ բոլորովին չէ դիւր գալիս։

—Ում որ դիւր չէ գալիս, թող աչքերը փակէ։

—Իսկ ում որ դիւր գայ։

—Թող աչքը բանայ, չքնի։

—

—Որտեղ է մայրիկդ Արամիկ։

—Երկու ժամ կըլինի, որ «մի վայրկեան» միայն հարևանի մօտ է գնացել։

—

Երկու բարեկամուհի.

—Ես Սուրէնի հետ կամուսնանայի, բայց չեմ ուզում քու ձեռքից խլել։

—Ընդհակառակն շատ ուրախ կլինեմ... ինձ համար աւելի հետաքրքրական կլինի շարունակել ծանօթութիւնս նաև այն ժամանակ, երբ որ դու էլ, քու բոլոր հարստութիւնդ էլ նրանը կը լինի։

—

—Հայկ, ահա մի ամիս կլինի, որ յայտնել ես, թէ սիրում ես ինձ, բայց մինչև օրս առաջարկութիւն չես անում։ Այս ինչ է նշանակում.

—Այս նշանակում է, որ ես աւելի օժիտով կին եմ ուզում ունենալ։

—

—Գործը տանուլ տուինք, պ. Վարդան։

—Միթէ, ինչու պ. փաստաբան։

—Որովհետև չկարողացանք տանել։

—

—Պարոն Միքայէլ... ինչքան կը ցանկայի...

—Ի՞նչ անկլին։

—Որ դուք բոէր լինէիք, իսկ ես անգլիացի.

—Ինչու։

—Այն ժամանակ ինձ գերի կը վերցնէիք։



† ՂԵՒՈՆԴ Վարդապետ ԱԼԻՇԵԱՆ
$^{9}/_{22}$-ին Նոյեմբ. 1901 Թ.

# XIV. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

ԵՐԿՐԱԳՆ. ՄԱԿԵՐԵՒՈՅԹԸ 509,950,714 քառակ. կիլոմետր է (մի կիլոմետրը 469 սաժէն է)։

ՑԱՄԱՔԸ երկրագնդիս մօտ $^{1}/_{3}$ մասն է կազմում—2,458,804 հող 6,802,634 ջուր։

ՈՎԿԻԱՆՈՍՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԽՈՐՈՒԹԻՒՆԸ.—Ատլանդեանը 3,790, Հնդկականը 3,444. Մեծ-խաղաղականը 4003, Հարաւային կէսագնդինը 3,390 մետր։

ՆՇԱՆԱՒՈՐ ԼԵՌՆԵՐԻ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆԸ.—Էվերէստ 29,000 ոտնաչափ, Դաւալագիրի 25,171, Էլբօրուս 18,000, Արարատը 17,000, Կազբէկը 16,000, Արագածը 13,500։

ՆՇԱՆԱՒՈՐ ԳԵՏԵՐԻ ԵՐԿԱՐՈՒԹԻՒՆԸ

Միսիսիպին 5,890 կիլոմետր, Նեղոսը 5.640, Ամազոնը 5565, Եանգ-Ծէ-Կեանգը 5,410, Օբը 4,230, Ամուրը 4,155, Վոլգան 3,500, Դանուբը 3,042, Դոնը 1,807, Ուրալը 1,520, Րէյնը 1.370, Սենան 600, Թեմզան 325 կիլոմետր։

ԵՐԿՐԱԳՆԴԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Երկրագնդիս վրայ բնակւում են մօտ 1564 միլիոն բնակիչ, որոնցից Եւրոպայում 376 մլ., Ասիայում 860 մլ. Աֆրիկայում 206 մլ., Ամերիկայում 125 մլ. և Աւստրալիայում 5 միլիոն։

Երկրագնդիս ազգերը խօսում են 3600 լեզուից աւելի։

Բոլոր կրօնները երկրագնդիս վրայ 1000-ից աւելի են։

ԵՒՐՈՊԱՅԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ՑԵՂՈՎ

ՍԼԱՒՈՆՆԵՐՆ են 94,355,000—(որոնցից 65 մլ. ռուսներ և լեհեր, 11 մլ. լեհեր, 7 մլ. չեխեր, մորաւներ, 10 մլ. սերբերացիք, բուլղարներ և կրօատներ)։

ՌՈՄԱՆԱԿԱՆ ԿԱՄ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱԶԳԵՐԸ — 98,94,8000 հոգի։ (Սրանցից ֆրանսիացիք 40 մլ., իտալացիք 30 մլ., սպանիացիք և պորտուգալացիք 23 մլ., ռոմանացիք 9 մլ.։ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱԶԳԵՐ—115,130,000. (սրանցից գերմանացիք և հոլանդացիք 63 մլ. անգլիացիք 40 մլ. սկանդինաւեցիք 9 մլ.)։

ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ — Կրօնով ամբողջ երկրագնդի վրայ.

| | | | |
|---|---|---|---|
| Կաթոլիկներ | 245 մլ. | | 493 |
| Բողոքականներ | 140 » | | |
| Ուղղափառներ | 91 » | | |
| Այլ և այլ քրիստ. | 11 » | | |
| ՀԱՅԵՐԸ 5 միլիոն են։ | | | |
| ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐ | — | » | 176 |
| ՀՐԷԱՆԵՐ | — | » | 9 |
| ԿՌԱՊԱՇՏՆԵՐ | | | |
| Բուդդայականներ | 500 » | | 891 |
| Բրամինականներ | 146 » | | |
| Ֆետիշներ | 245 » | | |
| Ընդամենը | | | 1570 |

ՓԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ համարւում են, Լոնդոնը՝ 5,190,000 բնակիչ, Պեկինը 4,500,000, Պարիզը 2,228,806, Վեննան՝ 1,136,270, Բերլինը՝ 1,125,000 Կ. Պոլիսը՝ 851,000, Նէապոլը՝ 450,000, Պետերբուրգը՝ 1,267,000, Մոսկուան՝ 986,000։

---

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՄԻՋԻՆ ԹԻՒԸ

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Մինչև | 60 տ. հասն. | են | 100-ից | 6 | մարդ |
| » | 80 » | » | 300 | 1 | » |
| » | 100 » | » | 1000 | 1 | » |

Մեռնում են տարեկը 33 մլ., այսինքն ամեն օր 96 հազար մարդ, ամեն մի ժամում 3730 մլ., ամեն մի րոպէում 60. մի վայրկեանում մի հոգի։

Ծնւում են տարին 42 մլ., այսինքն 9,500,000 աւելի, քան մեռնում են։

Պսակւում են 82 մլ., և 120 մարդուն մի պսակ է գալիս։

# ԵՒՐՈՊԱՅԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ֆրանսիական «Էկոնոմիստ» թերթի հաւաքած տեղեկութիւնների համաձայն Եւրոպայի բնակչութիւնը 1897 թուին հասել է 379 միլիոնի, այն ինչ տասը տարի առաջ, 1887-ին, 343 միլիոն էր. Նշանակում է, որ նա այսքան ժամանակուայ մէջ աւելացել է 36,7 միլիոնով, կամ 10,3%-ով. այնպէս որ եւրոպական ազգաբնակութիւնն իւրաքանչիւր տարի շատանում է 1,03%-ով։

Եւրոպական պետութիւնների մէջ ամենից արագ բնակչութեան կողմից զարգանում է Ռուսիան (17,4 միլ. կամ 20,1%)։ Երկրորդ տեղը բռնում է Գերմանիան (5,4 միլ. կամ 1,15%)։ Եւրոպական միւս պետութիւնների մէջ ազգաբնակութեան աճումը 1% անցնում է միայն Հոլանդիայում, Սերբիայում և Թուրքիայում։ Աւստրիա Ունգարիայում նա հաւասար է 0,68%, Իտալիայում 0,43% և վերջապէս Ֆրանսիայում 0,0 %։

Եթէ ենթադրելու լինենք, որ Եւրոպայի բնակչութիւնն ապագայում ես նոյն արագութեամբ զարգանայ՝ ապա 20-րդ դարի վերջին եւրոպական Ռուսիան կունենայ 228 միլ., Գերմանիան 1,065 միլ., Աւստրիա-Ունգարիայի—79 միլ., Մեծ-Բրիտանիան—65 միլ., Իտալիան—44 միլ., Ֆրանսիան ընդամենը 41,5 միլ.։ Ամենից քիչ կըզարգանայ Ֆրանսիայի բնակչութիւնը։

Ազգաբնակութեան խտութեան կողմից ներկայումս առաջին տեղը բռնում է Բելգիան, որտեղ մի քառակուսի կիլոմետրի վրայ գալիս է 220 մարդ։ Նրան յաջորդաբար հետեւում են Հոլանդիան—149 մարդ, Մեծ-Բրիտանիան—126 մարդ և Իտալիան—109 մարդ։ Մի քառ. կիլոմետրի վրայ 100 մարդուց պակաս ապրում են՝ Գերմանիայում—9 մարդ, Զուիցերիայում—73 մարդ, Ֆրանսիայում—72 մարդ, Աւստրիա-Ունգարիայում—69 մարդ։ Ամենաքիչ բնակիչ ունեցող երկիրներն են. Ռուսիան—20 մարդ, Շուէդիան—11 մարդ, և Նորուեգիան—6 մարդ։ Միջին թուով վերցրած՝ ամբողջ Եւրոպայում 1887-ին մի քառ. կիլոմետրի



վրայ ապրում էր 35 մարդ, իսկ 1897 ին—39,2., այսինքն 4 մարդով կամ տոկոսով արտայայտած՝ 11,4%-ով աւելի։

—

## ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՖՐԻԿԱ

—

Անգլիական կառավարութիւնը հրատարակել է պատերազմի սկզբից մինչև այս մայիսի 1-ն անգլիացիների ունեցած կորուստների ցուցակը։ Կռուի մէջ սպանուած են 355 սպայ և 3,667 զինուոր, մեռել են վէրքերից 115 սպայ և 1,230 զինուոր, գերութեան մէջ են 4 սպայ և 92 զինուոր, հիւանդութիւններից մեռել են 2[illegible]2 սպայ և 8,949 զինուոր, պատահական դէպքերից մեռել են 8 սպայ և 326 զինուոր, ընդամենը մեռել են 714 սպայ և 14,264 զինուոր։ Յետոյ 7 սպայ և 774 զինուոր կորել են անհետ, հայրենիք են ուղարկուած իբրև ինվալիդ 1,977 սպայ և 44,762 զինուոր, որոնցից մեռել են վերադառնալուց յետոյ 317 հոգի և միանգամայն դուրս են եկել ծառայութիւնից 2,493 հոգի։

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹԻՒԸ ՌՈՒՍԱՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

—«Գրաժդանին»-ը հաղորդում է, որ վերջին (1899 թ.) վիճակագրական տեղեկութիւնների համաձայն, Ռուսիայի 9 համալսարաններում ուսանողների թիւը եղել է հետեւեալը։

| | |
|---|---|
| Պետերբուրգի | 3,788 |
| Մոսկուայի | 4,025 |
| Կիևի | 2,316 |
| Խարկովի | 1,231 |
| Կազանի | 818 |
| Նովոռոսիյսկի | 498 |
| Իւրևի | 1,265 |
| Վարշաւի | 1,122 |
| Տոմսկի | 525 |
| Ընդամենը | 15,588 |

# XV. ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐԿՐԱԳՆԴԻՍ ՆՇԱՆԱՒՈՐ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐԸՆ և ԱԶԳԵՐՆ, ԻՐԵՆՑ ԵՐԿՐՆԵՐՈՎ.

| | Անունները | Տիրապետող կրօնը | Պետութեան գլուխը | Տարածու. թիւը ք. քլ. | Բնակչաց թիւը | Մայրաքաղաքները |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Արաբիա | Մահմեդական | Նահապետական | 2,300,000 | 3,000,000 | Սիվան |
| 2 | Արգենտին. Հաս. | Քրիստոնեայ. | Նախ.Լուիս Պենա | 2,835,969 | 4,000,000 | Բուէ-Այէրոս |
| 3 | Անամ | Անգլ. եկեղ. | Մեարին Տամ-Տայ | 230,000 | 21,000,000 | Գուէյի |
| 4 | Անգլիա | » » | Վիկտորիա կայս | 314.628 | 40,000,000 | Լոնդոն |
| | » գաղթակ. | » » | » » | 24,964,096 | 40,000,000 | » |
| 5 | Աւստրո-Հունգ. | Կաթոլիկ | Ֆրանց-Յովսէփ | 676,667 | 20,000,000 | Վիեննա |
| 6 | Աւղանստան | Մահմեդական | Միր-Խօդադադ | 550,660 | 4,000,00 | Քաբուլ |
| 7 | Բելուճստան | Մահմեդական | Լէօպոլդ II. թագ. | 315,015 | 350,000 | Գելատ |
| 8 | Բելգիա | Կաթոլիկ | Ֆերդինանդ իշխ. | 29,457 | 6,000,000 | Բրիւսէլ |
| 9 | Բուլգարիա | Օրթոդոքս | Նախ. Ֆ. Պէիկս. | 99,873 | 5,001,090 | Սոֆիա |
| 10 | Բրազիլիա | Կաթոլիկ | Սէիդ-Աբդուլ Եմ. | 8,337,213 | 15,000,000 | Րիօ-ժանէյրօ |
| 11 | Բուխարա | Մահմեդական | Վիլհելմ II. | 239,000 | $2\frac{1}{2}$ մլ. | Բուխարա |
| 12 | Գերմանիա | Աւետարանա. | Մենելիք II. | 540,418 | 60 » | Բերլին |
| 13 | Հաբեշստան | Հայադաւան | Վիլհելմինա. | 508,280 | 5 » | Գոնդար |
| 14 | Հոլանդիա և գաղ. | Բողոքական | Գէորգ I. | 2,036,291 | $4\frac{1}{2}$ » | Հաագա |
| 15 | Յունաստան | Օրթոդոքս | Քրիստիան. IX. | 68,688 | 2 » | Աթենք |
| 16 | Դանիա | Լիւտերական | Աբբաս-փաշա | 232,302 | $2\frac{1}{2}$ » | Կոպէնհագէն |
| 17 | Եգիպտոս | Մահմեդական | | 994,600 | 7 » | Կահիրէ |



| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 18 | Իսպանիա և գաղ. | Կաթոլիկ | Ալֆոնս III խնամ. | 1.233,817 | 20 մլ. | Մադրիդ |
| 19 | Իտալիա | Կաթոլիկ | Վիկտոր-Էմմ. II. | 286,588 | $30\frac{1}{2}$ » | Հռոմ |
| 20 | Չինաստան | Կռապաշտ | Կվանգ-Սու | 11,574,356 | 403 » | Պեկին |
| 21 | Կոլումբիա | Կաթոլիկ | Ռաֆ-Նունէզ | 1,118,100 | 4 » | Բոգոտա |
| 22 | Կոնգո | » | Բէլգ. (թագ.) | 2,735,158 | 17 » | Բոմա |
| 23 | Ռուսաստան | Օրթոդոքս | Նիկոլայ II կայսր | 20,666,445 | 125 » | Ս.Պետերբուրգ |
| 24 | Կորէյիա | Կաթոլիկ | Թունջի | 218,192 | $10\frac{1}{2}$ » | Սէուլ-(Կեօնգ) |
| 25 | Մեքսիկա | Կաթոլիկ | Նախագ. Դիազ | 1,946,292 | 11 » | Մեքսիկա |
| 26 | Մարոկկո | Մահմեդական | Մուլէյ-Հասան | 816,000 | 8 » | Ֆէզ |
| 27 | Պարսկաստան | Մահմեդական | Մուզ.-էդին-Շահ | 1,648,125 | 9 » | Թեհրան |
| 28 | Պերու | Կաթոլիկ | Նախ. Բերմուդէս | 1,049,970 | 3 » | Լիմա |
| 29 | Պորտուգալիա | Կաթոլիկ | Դոն-Կարլոս թագ | 89,143 | 5 » | Լիսաբոն |
| 30 | Ռումինիա | Օրթոդոքս | Կարլոս | 129,947 | 6 » | Բուքրէշ |
| 31 | Սերբիա | Օրթոդոքս | Ալէքսանդր I. | 48,586 | 2 » | Բելգրադ |
| 32 | Սիամ | Բուդդայական | Չուլալոնգկորին | 726,550 | 9 » | Բանկոկ |
| 33 | Միացեալ-Նահ. | Քրիստոնեայ | Ռուզվելտն | 9,668,272 | 77 » | Վաշինգտոն |
| 34 | Տաճկաստան | Մահմեդական | Աբդուլ-Համիդ II. | 2,061,224 | 21 » | Կ. Պոլիս |
| 35 | Ֆրանսիա և գաղ. | Կաթոլիկ | Նախագահ Լուբէ | 3,996,038 | 76 » | Պարիզ |
| 36 | Չերնագորիա | Օրթոդոքս | Իշ. Նիկոլայ | 9030 | $\frac{1}{4}$ » | Ցեթինէ |
| 37 | Չիլի | Կաթոլիկ | Նախ. Դոն-Մոնտ | 753,216 | 3 » | Սան-Թագօ |
| 38 | Շվէյցարիա | Բողոքական | Նախ. Կարլ-Շենկ | 41,346 | 3 » | Բերն |
| 39 | Շվէցիա-Նորվեգ. | Լիւտերական | Օսկար II. | 775,996 | 7 » | Շտոգհոլմ |
| 40 | Էկվատոր | Կաթոլիկ | Նախ. Կորտէրո. | 650,937 | $1\frac{1}{2}$ » | Կվիտո |
| 41 | Ճապոնիա | Սինդօյի օրէն | Մուցու-Խիտո Կայ | 382,447 | 43 » | Տօկիօ |

# XVI. ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Համաշխարհային նշանաւոր անցքերի եւ պատմութեան:

Քրիստոսի ծնունդից առաջ

12000 Աշխարհիս ստեղծագործութիւնը—ըստ եբրայեցւոց (Թէև գիտնականները միլիօնաւոր տարիներ են հաշւում):
5509 — Ըստ Աստուածաշնչի:
5490 — Ըստ Հրէից:
3245 Նոյ նահապ. տապանն է մտնում:
3246 Ջրհեղեղ:
2492 Հայ ազգի սկզբնաւորութիւնը:
2347 Հայոց տէրութիւնն սկսւում է:
» Պարոյրը՝ հայոց առաջին թագաւոր
» Չինացւոց տառերի գիւտը:
2640 Նինուէի հիմնումը:
2300 Եգիպտոսի թագաւորութ. սկիզբը:
2000 Մետաքսի գործածութիւնը:
1700 Եգիպտացւոց մեհենական գրերը:
1750 Բաբելոնի աշխարհակալութիւնը:
1651 Մովսէս մարգարէն ծնւում է:
1600 Ապակու գիւտը:
1500 Աթէնքի հիմնարկութիւնը:
1200 Գործնական արուեստի սկիզբը:
1150 Տպագրութիւնը Չինաց մէջ:
1056 Դաւիթը թագաւորում է:
1017 Սողոմոնը թագաւորում է:
1010 Սողոմոնի տաճարի շինութիւնը:
1000 Փայտի վրայ փորագրութ. սկիզբը:
982 Սողոմոնի մահը:
800 Արծաթ փողի գործածութիւնը.
802 Ասորեստանի թագաւոր. անկումը:
754 Հռոմուլոսը հիմնում է Հռոմը:
721 Իսրայէլացւոց թագաւ. անկումը:
585 Երուսաղէմի աւերումը Նաբուգոդ.
560 Կիւրոսը հիմն. է Պարսից տէրութ.
558 Կոնֆուկիոսը ծնւում է:
552 Բուդդայականութեան սկիզբը Հնդկաստանում:
523 Աստուածաշունչը թարգմանւում է յոյն լեզուով 70-ից ձեռքով:
469 Սոկրատէսը ծնւում է:
384 Արիստոտէլը ծնւում է:
356 Աղէքս. Մակեդոնացու ծնունդը:
325 Աղէքս. Մակեդոնացու Հայաստանի վրայով արշաւելը Հնդկաստան:
315 Չինական պարսպի շինութ. սկիզբը:
300 Մագաղաթի թուղթը հնարում են:
» Հռոմ. հնարում են աղիւսի շինելը:
160 Չինացւոց բամբակից թուղթ շինելը:
149 Արշակունեաց թագաւորութեան սկիզբը Վաղարշակից:
110 Հռոմ. հնարում են սապոն եփելը:
76 Կիկերոնի ժամանակ Տիւռոնը հնարում է շուտ գրելու ձեւը:
70 Վեզուվ հրաբուխի ժայթք. Հերքուլ. և Պոմպէի քաղ. աւերումը:

—

Քրիստոսից յետոյ:

Յիսուս Քրիստոսը ծնւում է:
2 Հռոմ. շինում են առաջին ջրաղացը:
34 Յիսուս Քրիստոսը խաչւում է:
» Հայերն ընդուն. են քրիստոնէութ.
41 Առաք. գրում են Աւետարանը:



41 Հռոմում, Ներոնի թագ. ժամանակ շինւում է ապակու (ամանեղէնի) առաջին գործարանը:
70 Տիտոսն աւերում է Երուսաղէմը:
97 Յովհաննէս աւետարանիչը գրում է Եփեսոսում իր Աւետարանը:
135 Հրէից ցրուելն ամբողջ աշխարհ.
210 Հռոմում առաջին անգամ լուսամուտների մէջ ապակի է դնւում:
253 Խոսրով թագաւորը հիմնում է Դավրէժ քաղաքը (Թաւրիզ):
257 Ս. Գրիգոր Լուսաւորչի ծնունդը:
300 Մեղրամոմից ճրագ են շինում:
303 Սուրբ Էջմիածնի հիմնելը:
304 Պարսիկները՝ ձեռնարկում են Տփխիսի Նարիղալա՝ բերդի շինութ.
306 Մեծն Կոստանդիանոս թագաւոր.
321 Մարտի 7-ից՝ Կիւրակին տօնել սկսւում է:
325 Առաջին տիեզերական Ս. ժողով Նիկիայում, Կոստանդիանոսի օրով:
» Արիստակէս հայրապ. Նիկիայ Ս. ժող. բերում է «Հաւատոյ հանգանակը»:
» Ս. Գրիգորիս Աղուանից կաթող.
328 Կ. Պոլսի հիմնարկութիւնը:
381 Կ. Պոլսի տիեզերական Ս. ժողովը:
400 Եւրոպայի եկեղեցեաց մէջ զանգակի գործածութիւնն սկսւում է:
406 Մեսրոպը գտնում է հայոց գիրը:
431 Եփեսոս. երրորդ տիեզ. Ս. ժող.
446 Վրացիք սկսում են գործած. Ս. Մեսրոպի հնարած այբուբենը (խուցուրի).
451 Քաղկեդոնի ժողովը:
451 Վարդանանց պատերազ. (յունիս):
452 Կաթողիկոսական Աթոռի փոխադրումը Ս. Էջմիածնից Դուին:
458 Վարդանի դուստր Շուշանիկը նահ. և թաղւ. է Թիֆ. (Մետեխի եկեղ.):
476 Հռոմայեց. կայսրութ. անկումը:
496 Ֆրանկներն ընդուն. են քրիստոն.
539 Եգիպտոսում յայտնւ. է Քրիստոսի Աբգարին ուղարկած դաստառակը:
550 Շերամի որդն ու մետաքսն առաջին անգամ Եւրոպայ է բերւում:
551 Մովսէս կաթ. հրամանով Աթ. Տարօնացին յօրինում է եկեղ. տոմարը:
570 Մահմէդը ծնւում է:
597 Վրացիք հայերից բաժանւում են:
636 Եւրոպայում եղեգէ գրչի տեղ փետրէ գրիչ են սկսում գործածել:
637 Արաբացիք տիրում են Երուսաղ.
650 Լատինացւոց եկեղեցեաց մէջ երգեհոն գործածելն սկսւում է:
653 Կարգւում է Վարագ. Ս. Խաչի տօնը:
706 Արաբ. Կաշմ ոստիկ. Նախիջեւանի եկ. 800 հայ իշխան. կրակ. նահ. է:
711 Իսպանիան գրաւ. է Արաբներից:
807 Չինացւոց պէս Եւրոպայի մէջ էլ թղթի գործածութիւնն սկսւում:
850 Արաբացիք շաքար են շինում:
855 Սլաւոնական այբուբենի գիւտը:
862 Ռուսաց տէրութեան սկիզբը:
870 Յունաց և կաթոլիկաց եկեղեցիները բաժանւում են միմեանցից:
924 Բագրատունեաց թագ. սկիզբը:
961 Անին դառնում է Բագր. մայրաք.
968 Խոսրովանոյշը հիմնում է Սանահնայ և Հաղպատայ վանքերը:
988 Ռուսները Ս. Վլադ. առաջնորդ. ընդունում են յոյներից քրիստոն.
993 Կաթողիկոսական Աթոռը Վաղարշապատից Անի է փոխադրւում:
» Բագրատունեաց թագ. վերջանալը:
1010 Բագրատ թագ. Վրաստ. և Իմերեթ. եկեղեցիները է հիմնում (Մցխեթ.):
1011 Թարգմանւում է վրաց լեզուով առաջին աւետարանը:
1022 Կուիտօ Եւրոպայի երաժիշտը նոտան հնարում է:
1072 Երուսաղ. տիրում են սելջուկները:
1080 Ռուբինեանք նորոգում են Հայոց թագաւորութիւնը Կիլիկիայում:

1086 Խաչակրաց արշաւանքի սկիզբը։
1147 Կաթողիկոսական Աթոռը տեղափոխւում է Անւոյ Հռոմկլայ—Կիլիկ
1171 Եւրոպայի Վիեննա քաղաքի մէջ բացւում է առաջին դրամատունը։
1173 Ս. Ներսէս Շնորհալու մահը։
1212 Թամար Թագուհու մահը։
1222 Նիժնի-Նովգորոդի հիմնելը։
1224 Չինգիզ-խանի յարձակմունքները և ռուսն. իրեն հպատակեցնելը։
1238 Մոնղոլական լծի սկիզբը։
1246 Առաջ. բժշկ. ուսումն. Ֆրանսիայ'
1291 Խաչակրաց վերջին արշաւանքը։
1294 Կաթող. Աթոռը փոխադր. է Սիս'
1299 Ֆլորենց. սկսում են ակնոցն. շին.
1301 Կողմնացոյցի գիւտը։
1308 Շվէյցարակ. հասարակապետ. հիմն.
1311 Երուսաղէմում սկսւում է հայ-ազգի պատրիարգութիւնը։
1323 Անի քաղաքի կործանումը։
1330 Գուտենբերգը, Ֆաուստը և Շեֆերը հնարում են տպագրութիւնը։
1338 Վառօդը գտնում են։
1365 Ասեղը հնարում են։
1380 Թնդանօթի գիւտը։
1384 Լենկթ. արշաւանքն. Ասիայում։
1393 Հայոց թագաւորութ. վերջանալը։
1415 Հուսին այրում են։
1428 Հրաձգ զէնքի գործածութիւնը Ռուսաստանում։
1440 Հռոմի Ս. Պետրոս եկեղ. հիմնարկ.
1441 Կաթողիկոսական Աթոռը վերջնապէս փոխ. է Ս. Էջմիածին.
1450 Եւրոպայի մէջ առաջ. գրքի տպագ.
1453 Տաճիկն. առնում են Կ. Պոլսին և վերջան. է Բիւզանդակ. կայսրութ.
1461 Կ. Պոլսի պատրիարքութեան սկիզբը
1464 Նամականուն և պոստայով թղթատար. հաստատւում է Ֆրանս.
1480 Ռուսաստ. ազատւում է Մոնղոլն.
1483 Ինկվիզիցիայի գործադրուելը։
1492 Կոլոմբոսը գտնում է Ամերիկան։
1500 Ճոցի ժամացոյցը հնարում են։
1518 Պարսից Իսմայիլ-Շահն առնում է Թիֆլիսը և Մցխեթը։ Հաւլաբարի կամրջի մօտ էլ մզկիթ է շինում։
1524 Առաջ. ձեռագ. լրագ. Վեննայում։
» Մակարեայի տօնավաճ. բացումն.
1546 Լիւտերը վախճանւում է։
1547 Յովհաննէս Գրոզնին ընդունում է առաջին թագաւորի տիտղոսը։
1552 Ամանների կլեկելը հնարւում է.
1556 Հաշտարխանի թագ. անկումը։
1567 Վենետիկում տպագրւում է առաջին հայերէն Սաղմոսը։
1583 Ռուսները առնում են Սիբիրը։
1590 Դիտակը գտնուեցաւ Գերմանիա։
1603 Շահ-Աբասի հայերին գերի տանելը Պարսկաստ.—(Ջուղայի գաղթելը)։
1610 Թէյի գործած. սկսւում է Եւրոպ.
1612 Ռուսաստանն ազատ. է լեհերից։
1615 Առաջին տպագիր լրագիրը։
1632 Առաջին կանոն. զօրքը Ռուսաստ.
1634 Վրաստ. միահեղականութ. սկիզբը
1672 Ծնւում է Մեծն Պետրոս Կայսրը։
1689 Շոգեշարժ մեքենաների գիւտը։
1700 Ռուսաստանում սկսւում է տարեգրութիւնը Քրիստոսի ծննդից և փոխանակ սեպտ. տարին հաշւում են յունուարի 1-ից։
1701 Առաջին թատրոնը Ռուսաստան.
1711 Դաշնամուրը հնարում են։
1723 Մահմադ-Դուլի խանն առնում է Թիֆլիսը և կողոպտում է Սիօնի եկեղեցին։
1725 Մեծն Պետրոս Կայսրը մեռնում է։
1752 Ֆրանկլինը հնարում է շանթարգ.
1754 Առաջին բանկի հիմնելը Ռուսաստ.
1755 Մոսկուայ առաջին համալսարան.
1768 Թղթի փողի գործադր. Ռուսաստ.
1785 Կովկասի փոխարքայութ. հիմնելը։
» Սիմէօն Կաթողիկոսը Ս. Էջմիածնում տպարան է հիմնում։



1779 Օդապարիկը հնարում են։
1785 Ժօրժ Ստեֆենսոնն առաջին շոգեկառքը շինում է։
1789 Ֆրանսիական մեծ յեղափոխութ.
1790 Գալվանը հնարում է գալվանեան էլեկտրականութիւնը։
1791 Նոր-Նախիջեւանի հիմնելը։
1794 Հայոց առաջին լրագրի հրատարակութիւնը Հնդկաստանում։
1789 Շուշու ամրոցի հիմնելը։
1795 Աղա-Մահմադ խանը յարձակւում է Թիֆլիսի վրայ և աւերում։
1798 Ղարաբաղից 1100 ընտանիք գաղթում են Ղզլարի կողմերը։
1799 Առաջին պարբ. հրատ. Վենետիկում «Տարեգրութիւն» անունով։
» Վրաց Գէորգի XIII-ը յանձնում է Վրաստանը Ռուսաստանին։
1800 Ջեննէրը գտնում է մարմնի պատուաստումը։
1801 Վիմագրութեան գիւտը։
1801 Վրաց և ռուսաց մէջ 10 յօդ. բաղկացած դաշնագրի ստորագրելը։
1802 Ռուսաստ. մինիստրութիւն է հիմն.
1803 Անգլիայ. մետաղէ գրչի հն. րելը։
» Շոգենաւի գիւտը։
1812 Արագատիպ մամուլի հնարելը։
1813 Մոսկուայի Լազար. ճեմ. բացումը։
1825 Ներսէս V աշտարակեցի կաթող. հիմնում է Ներսէսեան դպրոցը։
1828 40,000 հայեր գաղթում են Ռուսաստ.
1837 Հաստատւում է Ս. Էջմ. Սինոդը։
1839 Տաբլոթ անգլ. հնար. է լուսանկ.
» Երեւանի թեմ. դպրոցի հիմնուելը։
1841 Առաջին հեռագիրը շինում են Վաշինգտոնից Բալտիմոր։
1842 Ղարաբաղի թեմ. դպր. բացուելը։
1848 Էլեքտր. հեռագիրը հնարում են։
1850 Հայոց առաջին թատրոնը Թիֆլիս.
1851 Առաջին ռեւոլվերը շինւում է։
1853 Արեւելեան պատերազմը։
1859 Կովկասեան 69-ամեայ պատերազմ. վերջան. և Շամիլին գերի տանելը։
1861 Ստրկութեան ոչնչացումը։
1862 Սուէզեան ջրանցքի բացումը։
1864 Կովկասի վերջնական նուաճումը։
1867 Ամերիկայից Անգլ. Ատլանտ. ովկ. վրայով հեռագրաթելը շինում են։
1868 Հնդկաստանի հեռագրաթելը Կովկասի վրայով շինւում է։
» «Արարատ» ամս. հրատ. Ս. Էջմիած.
